ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 դեկտեմբերի 2014թ. թիվ 446-Ա

ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 56^3 հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 41 հոդվածով, 42 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.15 կետի գ/ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Գեոդեզիայի և հողային պետական տեսչության» 17.10.2014թ. Հ5 որոշումը և 22.08.2014թ. թիվ 5 ակտը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ կետի և 60-րդ հոդվածի 6-րդ ենթակետի պահանջները խախտելու՝ օրենքով սահմանված սեփականության իրավունքով չփոխանցվող պետական կամ համայնքային սեփականության հողամասերն օտարելու համար Տաշիր համայնքի ղեկավար Էդգար Արշակյանին նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

2. Տուգանքն անձնական միջոցներից 15-օրյա ժամկետում մուծել պետական բյուջեի 900005243119 հաշվի համարին:

3. Տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում այն կիրականացվի օրենքով սահմանված կարգով:

4. Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ս.Մակարյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի համաձայն սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել Տաշիր համայնքի ղեկավար Էդգար Արշակյանին պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. դեկտեմբերի 2
ք.Վանաձոր